

— Ես շատ եմ չափեսա անելի գինի խմեցի այս իրիկուն, որ դու վստահանաս յարմար առակեն, որ կըսէ թէ դիւին գաղտնապահ չէ:

— Լաւ՛, բայց ուրիշ փորձ մ'էլ կարելի է:

— Ի՞նչ, գրուցէ:

— Դու ըսիր թէ վարժ ես գիտաւարժութեան մէջ:

— Փորձը դիւրին է, ե՛կ ինձ հետ, այս սենեակը մտնենք: Տղաք, լուսաւորեցէք մարգարանը:

Քանի մը վայրկեան ետքը մտան ընդարձակ սենեակ մը, ուր պատերէն կախուած էին շատ մը գէւքեր. երկու գուլ եւ ծայրերը բութ սուրեր առաւ Քահինայ եւ տուաւ մէկը Սուրէնի. թաշկինակով ջ ստինքը վեր բարձրացուց կապեց եւ աջ բազկէն բեռեցեայ շապկին թելը ամփոփեց եւ սկսինք, ըսաւ:

Սկսան հարուածները եւ սուր սուրի հետ վեզ գալ. Սուրէն առաջ կարծեց թէ տղու մը հետ գործ ունէր. եւ թոյլ կը կենար, բայց քանի կ'երթար կը համոզուէր թէ սովորական ախոյեան չէր դիմացինը, եւ այնպիսի միջոցներ եղաւ, որ սկսաւ կասկածիլ թէ չափտի կարէնայ գլուխ գալ կնոջ մը հետ, որ երբեմն նենգութեամբ տեղի կ'ուտար կը քաշուէր եւ բուռն յարձակմունք իրարու վրայ կը պնդէր՝ եւ միշտ լաւ զգուշանալով: Սակայն Սուրէն սովորական գինաշարժ չէր, իւր ջղերը եւ մկանունքը յոգնիլ չէին դիտէր: Երբ կէս ժամու չափ տեսեց այս մենամարտը, եւ տեսաւ դիմացինը շնչասպառ ու քրտինքը, որ ջուրի պէս կը վազէր եւ տեղի չէր տար, հասկցաւ, որ արիեստին չէր պակսութիւնը:

— Ճանչցանք զիրար, իշխանուհի,— ըսաւ,— ապրիս, այս չափս բաւական է,— եւ սուրը նետեց:

— Չիս կը խնայե՞ս,— ըսաւ Քահինայ նոյնպէս սուրը գետին նետելով:

— Ոչ,— պատասխանեց Սուրէն,— պէտք է խոստովանեմ թէ իմ ցեղիս մէջ ուր ժառանգական է գիտաւարժութիւնը, շատ քիչ կը գտնուի մէկը, որ զիս այսչափ յօնեցնէ: Ապրիլս, լաւ պատերազմող ես դու: Միայն թե...

— Շարունակէ՛, ինչո՞ւ կ'եցար, մենք բարեկամ ենք ըսինք, տո՛ւր ձեռքբոյ, համարձակ եղիր ինձ հետ: